ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 38

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի պահանջի՝
համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Քանաքեռավանի համայնքապետարանում՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ, իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում արձանագրված թերությունները և բացթողումները ընդունել ի գիտություն:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել միջոցներ՝ իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում, արձանագրված խախտումները, թերությունները և բացթողումները սահմանված ժամկետներում շտկելու, կարգավորելու:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 37

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 34,2-րդ և 35-րդ կետերի, Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքի, Տեղական ինքնակառավարման մասին պրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջով՝ Համայնքի ավագանին որոշում է

Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք 12-րդ փողոց 3/2-1 հասցեում գտնվող 07-064-0127-0098 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 373,2 քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և 26,34քմ բնակելի տունը, 16,74 քմ անասնաշենքը, 4,24 քմ պարիսպը, 63,53քմ ծածկոցները ուղղակի վաճառքով օտարելու համար տալ թույլտվություն օտարման գին սահմանել՝

հողամասի համար 373,2քմ *2940դրամ = 1097210 դրամ
բնակելի տան համար 26,34քմ * 6300 դրամ = 165950 դրամ
անասնաշենքի համար 16,74քմ * 4200դրամ = 70310 դրամ
պարիսպի համար 4,24քմ * 4200դրամ = 17810 դրամ
ծածկոցների համար 63,53քմ * 4200դրամ = 266830 դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 36-Ն

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

1. Քանաքեռավան համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 27-ի << Համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին>> N 45-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 35

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 65-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

1.Ուժը կորցրած ճանաչել Քանաքեռավան համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 23-ի N 65-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 34-Ն

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 24-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Քանաքեռավան համայնքի ավագանու 2017թ. հունիսի 1-ի << Քանաքեռավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին>> թիվ 24-Ն որոշման հավելվածում կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված 1
Քանաքեռավանի ավագանու
2017թվականի հունիսի 1-ի թիվ 24-Ն որոշման
Փոփոխություն 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 34-Ն որոշմամբ

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1" ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում է Քանաքեռավան համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման կարգն ու պայմանները, ծավալը, քանակությունը,արտաքին գովազդի տեղադրման այլ չափորոշիչները, տեղադրման թույլտվության տրամադրման կարգը, գովազդի համար սահմանված տեղական տուրքերի վճարման կարգը և պայմանները:
2. Համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրումն իրականացվում է <<Գովազդի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի ու կանոնների պահանջներին համապատասխան:
3. Համայնքի տարածքում գովազդի տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը: Արտաքին գովազդի տեղադրման համար իրավաբանական կամ ֆիզիկական անձը /այսուհետև՝ դիմող/ համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
   ա/ դիմում համայնքապետի անունով,
   բ/ արտաքին գովազդի նախատեսվող էսքիզը, տեղադրման տարածքի հատակագիծը, որտեղ պետք է նշված լինի գովազդային վահանակի փաստացի տեղադրման վայրը,
   գ/ գովազդատու իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի պատճենը /ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը/,
   դ/ բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու դեպքում՝ շենքի կառավարման լիազոր մարմնի համապատասխան որոշում,
   ե/ ճանապարհների վրա արտաքին գովազդի տեղադրման դեպքում երթևեկության անվտանգության մասով գրավոր համաձայնություն ոստիկանության պետավտոտեսուչներից՝ ներկայացված հատվածի վրա համապատասխան նշումով,
   զ/ դեղերի, բուժտեխնիկայի և բուժման մեթոդների արտաքին գովազդի դեպքում առողջապահության նախարարության թույլտվությունը:
4. Համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը սույն կանոնների 3-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում իրականացնում է"
   ա/ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն,
   բ/ գովազդի տեղադրման վայրի զննում,
   գ/ տեղադրվող գովազդի համապատասխանությունը գործող պահանջներին,
   դ/ եզրակացության կազմում:
5. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման մասին դիմումի բավարարումը կամ մերժումը ձևակերպվում է համայնքապետի համապատասխան որոշմամբ:

6. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման դեպքում դիմումատուին տրամադրվում է գովազդի էսքիզի համաձայնեցված տարբերակը՝ ստորագրված և կնքված համայնքապետի կողմից, անհրաժեշտության դեպքում նաև տեխնիկական պայմաններ, որտեղ նշվում է արտաքին գովազդի տեղադրման աշխատանքները իրականացնելու ժամկետները:
7. Արտաքին գովազդի տեղադրման դիմումը կարող է մերժվել, եթե՝
   ա/ ներկայացված փաստաթղթերը թերի են և դրա մասին պատշաճ ձևով նախազգուշացումը համայնքապետարանի համապատասխան աշխատակցի կողմից ծանուցվելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում դիմողը չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը կամ նյութերը,
   բ/ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքի կամ սույն կանոնների պահանջներին,
   գ/ արտաքին գովազդը տեղադրվելու է ճանապարհի վթարավտանգ հատվածների, կամուրջների, հենապատերի, ծառերի կամ ժայռերի վրա և այլ դեպքերում:
8. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու մասին որոշման մեջ նշվում է մերժման պատճառներն ու մերժման համար հիմք հանդիսացող իրավական հիմքերը:

2" ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Գովազդային վահանակի հենասյունը պետք է պատրաստվի այնպիսի նյութերից, որ քամու կամ կողմնակի ազդեցության հաշվարկային բեռնվածության տակ և շահագործման ընթացքում ապահովվի բավարար կայունություն:
10. Ճանապարհի բաժանարար գոտում գովազդային վահանակի տեղաբաշխման ժամանակ
    ա/ բաժանարար գոտում գովազդի հենասյունը պետք է պաշտպանվի երկկողմանի ճանապարհային պաշտպանիչներով,
    բ/ եթե գովազդային վահանակի լայնությունը գերազանցում է բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապրհի մակերևույթից 6 և ավելի մետր բարձրության վրա,
    գ/ եթե գովազդային վահանակի լայնությունը չի գերազանցում բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 2,5 և ավելի մետր բարձրության վրա:

11 Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 33

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

1. Քանաքեռավան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռության ժամերը սահմանել 23. 00-ից մինչև 7. 00-ն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 32

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ/ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ/ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Առևտրի և ծառայության մասին >> օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի և<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի պահանջներով՝ Համայնքի ավագանին որոշում է

1. Քանաքեռավան համայնքի վարչական տարածքում արգելել << Առևտրի և ծառայության մասին >> օրենքի 15. 2 հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:

2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ հանդիսացող հեստապարային ակումբները պետք է գտնվեն բնակելի տներից և որոշման 1-ին կետում նշված տարածքներից նվազագույնը 100 մետր հեռավորության վրա:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 31

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական տուրքերի և վճարների >> մասին օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարել փաստաթղթային կարգով:

2. Հաստատել Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված 1 Քանաքեռավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 31 որոշման

N	Անուն Ազգանուն	Ամիս ամսաթիվ	Մուծված գումար	Թույլտվության N	Գործունեության ժամկետ	Աստիճանի ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 30

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Քանաքեռավան համայնքի 2021թ. ապրիլի 27-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով

1. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին
2. Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը/հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին
3. Քանաքեռավան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին
4. Քանաքեռավան համայնքի ավագանու 2017թ. հունիսի 1-ի N 24-Ն որոշմամբ հաստատված հավելվածի մեջ լրացում կատարելու մասին
5. Քանաքեռավան համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 23-ի N 65-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
6. Քանաքեռավան համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 27-ի N 45-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողը և շինությունները ուղղակի վաճառքի միջոցով վաճառելու թույլտվություն տալու մասին
8. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ